

Ալաքար

Ալաքար. գղ. *Albite*, իտ. *Albite* բառին տառադարձեալն է, զոր առաջին անգամ Վեր. Հ. Քալ. կազմած է: Սոյն հանքը Քաղղիոյ Ալքի քաղաքին անուամբ կը կոչուի, վասն զի հոն առատութեամբ կը գտնուի: Նորայրի բաւարանն չունի սոյն բառը, բայց Հ. Մէնէվիլի Հանքարանութեան մէջ *Albite*ի նախ սեփականուած է Հ. Քալ. Ալաքարը, և ապա՝ Սյիտաքար, Նատրոնի փերտապար:

Ալապաստր

Ալապաստր. գղ. *Albâtre*, իտ. *Alabastro*. Յունարէն *Αλάβαστρον* աղապաստրոն բառի տառադարձութիւնն է: Տառադարձութեամբ փոխանակ Ալա (պ) աստորի կը գրեն Ալա (բ) աստոր: Ըստ տե. կոչման (Սոս մերմերի) կըրնամբ թարգմանել Ձրակոռ: Ոմանք կը գործածեն նաև *Լսնակոռ*, որ թէև Ալապաստրի ներդաշնակութիւնը չունի, բայց իբրև լաւ կազմուած բառ կրնայ բաւարաններու մէջ մուտ գտնել:

Ալումինիոն

Ալումինիոն է տառադարձութիւն գղ. *Aluminium* (ի լատ. *Alumen* պաղլեղ կամ լեղ) բառէ, որուն Քալուինի սեփականած է Պաղլեղածին, իբր պաղլեղ կամ լեղ (տնկ. շապ) առաջ բերող կամ ծնող. իսկ Նորայր՝ Բնակեղ (բնական լեղ): Այս բառերէն երկրորդը աւելի գործածական կը համարուի:

Ածխազազ

Սոյն բառը Հ. Մէնէվիլի Հանքարանութեան մէջ սեփականուած է գղ. *Grisou* բառին, որուն շատ առաջ սեփականուած էր Մօրից կազ, թարգ. *Gaz de marais*, որ նոյն է լեղ *Grisou*. Այս երկու հոմանիշ բառերու ընտրութիւնը գործածողին ճաշակին կը թուուի:

Ածխաթմոն

Ազգային թերթերու և ուսումնական գրքերու մէջ, այս բառը սեփականուած է գղ. *Acide*

carbonique բառին, ըստ Հ. Քալ. Բնածխական քրոնոստ: Իբրև համառոտութիւն Ածխաքրոն բառը շատ լաւ կը համարիմք, և զայն գործածողներուն մտադիրը հետևող պիտի ըլլայինք՝ եթէ ներելի ըլլար քիմիայի աւան *igue*, այնի *eu*, ոչ *ure* մասնիկներով՝ ի բնագիտաց կազմուած պատնէշը փլցնել անցնել: Բայց քաջածանօթ է հմուտ անձանց և մասնագիտաց, որ Էւրոպացիք ևս պատկառելի են քիմիայի այս ամրակալով պատնէշէն, և փոխանակ *Carbonacide*, *Carbon-acido* գործածելու, *Acide carbonique*, *Acido carbonico* բառերն նախամեծար համարել են:

Շարաշարեղի

Հ. ՍԻՄՈՆ ԵՐԵՄԵԱՆ

ԳՐԱԽՕՍԱԿԱՆ

ՏԱՐԲԱՐԱՆԱԿԱՆ ԲԱՌԻՑ ԿԱԶՄՈՒԹԻՒՆ

ՀԱՅԵՐԵՆԻ ՄԵՋ

Գ Ի Տ Ո Ղ Ո Թ Ի Ի Ն Բ

Ե. ՏԵԶԱՍԻ

Քանի մ'օր առաջ այսպիսի վերնագրով տետրակ մի ձեռքս հասաւ, խալիբէն լեղուով զրուած, մեծադիր ուլածալ մը, 12 էլ պարունակութեամբ, յորում քաջածանօթ հմուտ հայագէտն իր խորհրդածութիւնները կ'ընէ Հ. Մ. Քալուինի նորատիպ (բ. տպ. վե. բանորոգուած) Արոնեստարաբանոյթեան լեղուի մասին, և նաև այդ նկատմամբ թիպագրողին մէջ Պր. Բոլառտ ստորագրութեամբ բանասիրի մը գրած գիտողութեանց վրայօք:— Այս տետրակը պատճառ առաւ ինչ ձեռք բերելու և գրեթէ ծայրէ ի ծայր կարգալու վերոյիշեալ Արոնեստարաբանոյթեան, և յետոյ քանի մը ոչ նրբին անդրադարձութիւններ ընելու, զորս երկու տողով պարզեմ: Ուստի

ներկայ առդերուս մէջ նպատակ դրեր եմ ինձ՝ համառօտիւ ներկայացընել մեր ընթերցողաց Ե. Տեղայի վերոյիշեալ տետրակի պարունակութիւնը, տեղտեղ ընդլայնելով և քանի մը խորհրդածութիւն աւելցընելով աշխարհաբար հայ լեզուի նկատմամբ:

Ե. Տեղայի գրածը բանախօսութիւն մ'է, զոր կատարել է նա Վենետիկեան կաթառին մէջ (Istituto Veneto): Սկիզբէն քանի մը դարձուածներով կը ծանուցանէ՝ որ իրեն նպատակը չէ Արաքստարանոսարեան պարուսակած գիտութեան կամ կարգաբանութեան վրայ խօսիլ, որ իրեն մասնաճիւղէն օտար ապարէզ մ'է, այլ միայն մէջտեղ պիտի բերէ տարաբանական տարերաց անոռանաւորաւ մը վրայ այդ գրքի մէջ աւանդուածը, և նորա վրայօք նոյն լեզուի խօսողներու կողմանէ եղած գիտողութիւնները, որոց վրայ նաև ինքն ալ իւր խորհրդածութիւնները կ'աւելցընէ:

Հաւատարիմ իւր այս ծրագրին՝ Ե. Տեղա կը թարգմանէ Բիւզանդիոնէ՝ Պր. Բոլատի գրած յօդուածէն քառանեակ մի տողեր, որոց մէջ Պր. Բոլատ ազնիւ և կիրթ անձի մը վայելել կերպով կը գրուատէ նախ Հայ Գալուստի գործին օգտուէտ լինելու և գրուածին ընտիր դաստորութիւնը և կամ պարունակութիւնը, և համետ զինը, և այլն, որով արժանի կը համարի ամէն հայ արուեստագիտաց ձեռքին մէջ իբրև առձեռն օգնական մը տեսնելու նոյն գիրքը: Յաւ կը յայտնէ միայն, որ ժողովրդեան արուեստաւոր դասակարգին համար այսպիսի պիտանացու գրուած մը՝ գծախտաբար ժողովրդական լեզուի ոճով գրուելէն շատ հեռի է, որով անհասկանալի պիտի մնայ անոնց համար՝ որոց օգտակար լինելու նպատակաւ գրուած և հրատարակուած է:

Այս արգարացի գիտողութեան վրայ խորհրդածելով հայագէտ Ուսուցչապետն՝ ճշմարտ կը գտնէ զայն. բայց չի վարանիր հարցընելու թէ զարեօք կայ իրաւջընէ ըստ բաւականին կազմուած՝ հասարակ ժողովրդի դասն զատու համար հասկանալի հայերէն հասարակաց լեզու մի: Կը հաւատաւ որ հայերէն ալ յունարենի նման՝ ունի այժմ

իրաւջընէ իւր ըստ բաւականին մաքուր և կոկ՝ գիտնականաց գրաւոր աշխարհաբար լեզու մը, բայց կը տարակուսի թէ այդ լեզուն հասկանալի լինի ըստ ամենայնի հասարակ արուեստաւոր ժողովրդէն: Այս պարագայիս մէջ երկու ճամբայ կը գտնէ, այսինքն, կամ՝ ռամիկ լեզուով գրելու՝ յատկապէս արուեստաւորաց գաղտնի դիւրահասկանալի լինելու համար, և կամ՝ գիտնականաց լեզուով գրելու (ոչ գրաբար, որ անոսած լեզու կը համարուի՝ այլ գրաբարի վրայ ձուլուած գրական աշխարհաբար մը): Առաջին պարագայի մէջ գծաւորութիւն կը ծագի հասարակ ժողովրդեան լեզուի րնտրութեան նկատմամբ, քանի որ մէկ գաւառի արուեստաւորը՝ միւս գաւառաց ընկերաւորիցնէրէ տարբեր և գրեթէ անհասկանալի լեզուով կը խօսին, որով փոքր Ասիոյ և կամ Կոստանդնուպոլսի արուեստաւորաց համար գրուածը՝ նոյն գաւառականով, անհասկանալի պիտի ըլլայ Կարնեցուց կամ Վանեցուց կամ Սայմաստեցուց. և վերջնոց լեզուով գրուածը՝ անիմանալի պիտի լինի Կովկասոյնոց կամ Կիլիկեցուց, և այլն, և այլն. ուստի կը հետեցընէ՝ որ հասարակ ժողովրդեան դասակարգին հասկանալի լինելու համար՝ պետք պիտի լինի մի և նոյն գրուածը գտնազան գաւառականներով գրելու, որով ուղղակի հասնի իւր նպատակին: Բայց այս ճամբան բանաւոր չի գտներ, հետեւաբար կը մնայ երկրորդը, այսինքն՝ հասարակաց գրաւոր աշխարհաբարով գրելու կերպը: Այս պարագայիս մէջ արդէն ստորին դասակարգի հասկացողութիւնէն աստիճան մի վեր կը բարձրանանք, հասկանալի լինելով միշտից անկարգի, որ նախնական և միջնակարգ դպրոցներու մէջ սովորած է մաքուր գրաւոր աշխարհաբարը հասկնալ և գրել, և կարող է միջնորդ չինել բարձրագոյն գիտնականաց և հասարակ ժողովրդեան, թարգմանի դեր կատարելով ամէն մէկ գաւառաց մէջ, ինչպէս ներկայապէս ալ կը լինի եւրոպական ամէն ազգաց մէջ. և ահա այս կերպով հետեւի մի անուղղակի կերպով կրնայ հասնի իւր նպատակին:

Գալով այս միջին դասակարգի հասկանալի գրաւոր աշխարհաբարին աւելի կամ

նուազ գրաբարաձեւ կամ խրթին գրուելու սճին, այս դիտել կու տայ Ոստուցչապետն Տեղա՝ որ չէ կարելի շատ պահանջող լինել գրաբարակերպ գրելու մասին այն հեղինակներէն, որ իրենց գրելով ամբողջ կեանքը մաշեցին գրաբար լեզուի և գրաբար հեղինակներու ուսմամբ, և Ս. Ղազարու կրօնական կնիքը իրենց և հնապարհան գարոցն աշակերտք և անպամբ են. որոց մեծագոյն մասն կ'ապրին ժողովրդական շրջանակէն հեռու, հետեւաբար իրենց քնական գրութեան ռճն ալ տալիս գրեցնու (որոց հետ և որոց մէջ կ'ապրին) քան թէ ժողովրդեան լեզուի պիտի մերձենայ, այնպէս որ ժողովրդեան մէջ շփուող բնէն մը համար արուեստական և իմաստական դատուած գրաբարակերպ լեզուն, Ս. Ղազարու Հարց գրչին ներքէ բնական և արամբարանական լեզու մի կը դառնայ, և յարել կերպ ալ լինել կարելի չէ:

Ուստի հետեւեց կ'ելլէ, որ Հ. Քաջունայ և Նմանակաց համար արուեստական լեզուն պիտի լինի ժողովրդական լեզունով գրելն և ոչ սակաւ ճշանց պատճառ, և թէ գրաբարակերպ գրելը յատուկ ջանքի և կամ նպատակի և կամ լեզուադիտութիւն ծախելու ծնունդ չէ Միտիմարեանց կողմանէ, որք որչափ ալ ջանան ժողովրդական գրելու, այս վերջինս միշտ պիտի լինի նոցա համար արուեստական և ոչ բնական լեզու:

Այս խորհրդածութիւննու վերջը Պրոֆ. Տեղա կը գտնայ առ Հ. Քաջունայ և փոքր ինչ նեղարտած տեսնելով զինքը իւր պատասխանագրոյն մէջ (Բազմավէպ, 1898, Ապրիլ և Մայիս ամսաթիւք), կը յիշեցնէ որ իրեն դէմ եղած այդ գանգաւան կամ քննադատութիւնն այն տեսակներէն չէ որոյ համար կարմրելու պէտք լինի. և թէ իւր բարձր լեզուին և ժողովրդեան պարզ լեզուին մէջ կրնայ խոտորակազոյն միջնորդ մի մտնել, և պէտք եղած տեղերը մեկնել, բացատրել:

Պատնայով ապա առ քննադատն Պր. Բուլատ՝ սրամիտ՝ Հայագէտն տեսակ մի երկսայրաբանութիւն կը կազմէ. Հ. Քաջունայ Արուեստաբանութեան կամ Հասկանալի և ժողովրդեան և կամ ոչ, և հետեւաբար ժողովրդը կամ զայն հասկանալով պիտի

կարգայ և օգտուի և կամ չհասկնալով պիտի չկարգայ. առաջին պարագան կը մերժուի Պր. Բուլատէ, կը մնայ ուրեմն երկրորդը, այսինքն թէ այդ գրեցն իր նպատակին չհասնելով՝ ընդունելի պիտի չլինի ժողովրդեանէն, որ զայն պիտի չկարգայ՝ իբր անհասկանալի. Բայց կը յիշեցնէ Պրոֆ. Տեղա՝ որ այս եղածն երկրորդ տպագրութեան մէջ, արդ, առաջին տպագրութեանն ու չափեց ապառք, կը հարցնէ. և միթէ կարելի՞ բան է չփնտռուած, չկարդացուած և շտեմարանի մէջ մնացած գրքի մը վերստին տպագրութիւն ընել, վատնելով ընդունայն տեղ ժամանակ, աշխատութիւն, դրամ... և այդ ամէնն այնպիսի անձէ մը՝ որ գրամական քաջ մատակարարութեան մէջ օրինակելի տպագրութեան է երկարամեայ և իրավաստակ փորձառութեամբ... Այս հարցմանց, կ'աւելցնէ Ոստուցչապետն, թող պատասխան տայ նա միայն որ Արեւելքի մէջ կ'ապրի:

Այս ամէնը գրաբարակերպ կամ խրթին ոճով գրելու մասին կը խորհրդածէ Պրոֆ. Տեղա՝ նպատակ կամ ըստ ոմանց իբրեւ ներքող Հ. Քաջունայ Արուեստաբանութեան Բայց զիջանելով հանգիստ գրաբար բառերու, հոլովութեան դարձուածներու գործածութեան մասին, սակայն ինքն ալ իրաւամբ կը պարտեալ իւր յոգեբեր՝ երբ իւր աչքին առջև կը ներկայանայ քառասուն տարեան մը սպանութեան և ոչ ընդացման վատականաւոր ծառայի մը՝ կը մասնորէն, որ զէթ արևմտեան աշխարհաբարի մէջ անհրաժեշտ է բայի մը սահմանականն իրեն ստորագրականն որոշելու համար. իւր գաղտնի ոչ նպատակաւոր և ալ տպացուցական կը համարի այս մասին Հ. Քաջունայ մէջտեղ բերած արդարացուցման պատճառները. և կը յաւելու. «Եթէ Քաջունայ Հայրն ծերացած, և իմաստութեամբ ծերացած, իւր ազգին դրոց մէջ, կը գանգաւոր նորագոյն և երկտառագրութեան և հետեւաբար նուազ փորձառու գրողներու վրայօք, որ չորս կողմն իրեն վարձապետութիւն կ'ուզեն ընել, հասկանալի բան է և արգահատելի. բայց թէ կ'ուզէ իբր ուղիղ քննադատութեան կանոն հաստատել և պահանջել՝ որ քննադատը լիակա-

տաք գիտութիւն ունենան և կամ գերազանց միտք քան զորս կը բննադատեն, պիտի գտնէ իրեն զէմ շատ հակառակորդներ, նաև նոյն իսկ ամբնախորհարհ և ամենապարզ անձերէ։ Արիստոտելի ունկնդիրներն նուաստազգին ալ կրնար նորա մէկ սխալը սրբազրել, թէ պէտ և Յունաստանի չկարենար ինքզինքն իբրև երկրորդ Արիստոտել մ'ընծայել»։ ... Ուսուցչապետին այս տողերը կարդալու ժաւանակս ակամայ մտածեցի տիրութեամբ՝ թէ որքան գիտական և դարգացեալ Եւրոպիոյ գրիչներու դարձուածներն՝ նոյն իսկ սուգաւորութեան մէջ՝ ազնուական և բարեկիրթ զգացումն կը ցուցընեն, և որքան աստիական գրիչներն այսպիսի պարագայից մէջ (բացառութիւնք սակաւամիւր են) անհարթ բացաւորութեանց և տղեղ կրքերու յայտնութեանց արտապրութիւնք են... «Ո՛րչափ հեռի են Արեւելքը յԱրեւմտից»։

Երկու կողմանէ եղած բանախորէր պարզելէ վերջը՝ կ'անցնի Պրոֆ. Տեղա խօսելու յատկապէս Հ. Քալմանիոյ հայերենի տարարաբանական քառակազմութեան վրայոց հետեւալ տողերով, զորս բառացի թարգմանութեամբ կը փոխադրենք։

«Յիշատակելով այս հակաճառութիւնները, որք անցելոյն վրայ մտածել կու տան և ապառնոյն վրայ բանդադաշտել, նպատակ ունէի ես զիմիւ ժամանակիս տարբարգէտներէն աւանդնք՝ որք առ այժմ հայերէն լեզուն ուսանելու սովորութիւնը չունին։ Եթէ չտոյրենին միայն վախի հետեւեղէ է, եթէ խորշումն կը զգան տեսնելով այն լեզուին տափք ձեւերը կամ լսելով անոնց հնչումը, թող փորձեն, և պիտի գտնեն զանոնք աւելի ներդաշնակ, աւելի գիրաթափանց և ուղեղի մէջ մնացական, քան թէ իրենց գեղակալով՝ *parachlorobenzyloparachlorisobenzaldoxime*, կամ թէ *orthohydroxybenzylideneparamidobenzyliidenephenylylhydroazono* բառերը։

«Եթէ Հ. Քալմանի իւր հետազոտութիւնները և աշխատանքը տարբերաց (կոչման) մասին՝ վերջին ժամանակներու հետ կապէր, գուցէ հին վարժապետաց ուսուցածին զանցառութիւն ընէր. բայց ինքը ծաղիկը իւր ծաղկած ժամանակ քաղելով՝ եղաւ և մնաց

միշտ սքանչացող Լափուզիէի և Բիրզելիուսի, և այդ ընտրութեան մասին երբեք չզղջաց, Հետամուտ չեղաւ նորանոր գիտութիւններէ, այլ զո՛հ մնաց ճանչնալով և վայելելով զանոնք, և վայելել տալով նաեւ իւր ազգակցաց այնպիսի ճարտարութեամբ թարգմանչի՝ որոյ յարգը գուցէ Եւրոպայի գիտնականը չեն գիտեր ըստ արժանւոյն կշռել։ Անպատակ պիտի լինէր ամէն շանք՝ եթէ բառերը, որք մարդկանց այլեւայլ գործածութեան համեմատ ազատ իմաստներ կ'առնուն, չբռնազատուէին միշտ՝ որոշ կերպով՝ մի և նոյն իրերը նշանակելու և Յունարէն բառական չէր. հայերէնն (որ շատ օգտուած է անկէջ) սովորութիւն ըրած է իւրացընել անոր ոգին, բայց ոչ ոսկերքը ու մարմինը, այնպէս որ *teologia* և *geografia* յունական գաղափարներ կը ներկայացընեն իրենց կազմութեան մէջ, բայց նոր զգեստի մը տակ կը լինին աստուածաբանութեան և աշխարհագրութեան իսկ մենք՝ հին աշխարհի այնքան ազգաց բաղդատութեամբ՝ ամենն աւելի ծոյլերն եղած ենք։

«Անուանց օրինադրութիւնը բարի քաղաքացւոյ մը պաշտօն է, և օրինադրել այնպիսի կերպով՝ որ իրարու հետ ունեցած յարաբերութեանց մէջ մէկզմէկ բացատրեն։ Նորանոր կազմութեանց համար առաջնորդը պատրաստ էր՝ գաղղիական պարոյցը, որ յետոյ հասարակաց դպրոց եղաւ։ Բառերը կ'ընթողնէր իւր բան աչքի առաջ ունենալու էր՝ տարբերաց այնպիսի կոչումներ ընծայել՝ որ

1. Իւր ծանօթութիւն մէջ բերենք այստեղ պրոֆ. Տեղայի հետեւեալ տողերը. «Եթէ գիտութեանց վերաբերեալ ամէն մի առարկայ, եթէ գիտութիւններէ ծնած և բաղադրուած աւանդ մի գաղափար՝ Հայաստանի մէջ ունենային իրենց սեփական ազդեցիկն և ազդակն կու չունենէր, և հեղինակ մի ուզէր մէկզի թողլով զանոնք, զիմէ զործածութիւնէ խորթացած և հնացած բառերու, և ջանար զանոնք նորերուն տեղ փոխանակել, անշուշտ բռնաւորի պիտի նմանէր. թէպէտ և վախնալու առիթ պիտի չտար, քանի որ Խորա հեղինակն անկանաբար ազդեցիկն պիտի մնար»։ — Աւերել տեղ մ'աւ. «Քալման

խծաձայնի շինէին սեփական լեզուի ներդաշնակութեան մէջ, և անոնց բաղադրեալներն ալ այնպիսի նախնայնորով նշանակել՝ որ միշտ մի և նոյն իմաստը յայտնէին և բունին վրայ բնական ծագած ճիւղեր երեւէին, թէ ինչ ուղանք և կրցած է ընել այս մասին Միխիմա-րեան գիտնականն՝ շուտով և քանի մը խօսքի մէջ կը պարզեմ:

«Փոսփոխի մանուն տալ պէտք էր. ահա պատրուտ է յռասածին բառը, որ է ժնոդ յռասոյ. և թէպէտ նախնիք այդ կոչումը բնութեան ծնունդ մը ներկայացնելու չեն գործածած, բայց այսուհետեւ կրնայ այդ նպատակին ծառայել: Մանիշակը կը յիշեցնէ իողիտն, և հայերէն այդ ծաղկին անունը կրճատուելով՝ մանիշ անուան ներքեւ կը ներկայացուի իողիտն: Ախորժելի հոտ չի տար քրտմոն. և որովհետեւ հայերենի մէջ ժամ բառը կը նշանակէ զարշահոտութիւն և փառութիւն, ուստի քրտմոն կը լինի ժամին. լատին լեզուի կը գիմուի ֆլուոր (ծարճմ) նշանակելու համար, և ծորան ու ծորեղ բառերու նման, նուրբամբ՝ կը յօրինուի ծորին կոչումը. և

այս կերպով ալ կը շարունակուին միւս տառերաց բառերու կազմութիւնը: — Յորտ հին բառ է, և կը նշանակէ մեր մէջ *agro*, *acido*; արդ, ամանցելով զայն ռառ և ռակ մասնակիներով՝ կ'որոշուին իրարմ *acido* և *ossido*, մերկէն տակի բնորոշ կազմութեամբ, որ մի և նոյն բանը մերթ լատին (*acido*) և մերթ յոյն (*ossido*) լեզուներով սովոր ենք կոչելու: — Նաեւ ծոռման հին բառ է. բայց ինչպէս կը բացատրուին նորա վերլուծմունքն, էթէ թթուաբոլ *solforico* է, կը լինի ծծմբական, իսկ էթէ *solforoso*, կը լինի ծծմբային, և ամէն ոք կը տեսնէ թէ ինչ ստուտն կը կատարեն այս կան և այլն ամանցներն, որք ընտիր մասնիկներ են և հասարակ են թէ՛ զբարբար և թէ՛ աշխարհաբար լեզուաց: Եւսոյ կայ *sotto* (*hypo*—) և *sopra* (*hyper*—), որք կը բացատրուին հնադարեան գործածութեամբ ուրիշ բարդութեանց մէջ սովորական եղած ենք և վերականգնելով, որով կը ձեւանան են, քաժմմբական և վերջնաստմական, և այլն, բարդութիւնները:

«Անցնիք այժմ *ossido*ներուն (թթուակ-

նի որ մեծապէս հարկ կայ շինելու (բառեր), կըրնանք երեւակայել երկու գործողներ, որ իրարմէ բաժան ճամբաներով կը հասնին մի և նոյն նպատակին. առաջինն՝ իւր հայեացքը դէպ ի վեր՝ ի նախնիս ուղղած, և համոզուած՝ որ վերստեղծման փամանակ հինը նոր կը դառնայ. իսկ միւսը՝ չորս կողմը զարկուցած իւր աչքերը՝ կը նայի արդէն իսկ կենքը ունեցող (կոչմանց) վրայ, որոքք ոսկայն ոչ միշտ իրեն կը վերաբերին իրեն սեփականութիւն: Ինչպէս յարեմուտս նայելը, կ'ըսեն չայ եկեղեցւոյ սուրբ Հայրերը, քոթախտութիւն յառաջ կը բերէ. և դուցէ արուեստիք վրայ դրող մը՝ աւելուածն լեզուներէ ընծայուած բառերու անհուն կոյտերուն ներքեւ պիտի խեղդուէր. . . իսկ ուր թողունք տաճկերէնը, որ չափէն աւելի արդէն տիրած բունացած է հայ լեզուի վրայ, որ իւր տեսակ մի անկախութեան կոխը կ'ուզէ շարունակել բառադիրքներուն և հայկաբան բառադիրքներուն ձեռքով: — Ուրիշ տեղ մ'ալ. «Յայտնի է, որ էթէ Եւզընի Եւրպայացւոց ամէն ընծայածներն ալ ընդունել՝ գործը շուտ կը լինայ: և այն փամանակ հայկական լեզուի

հարստութեան մասն պիտի կազմեն շարք մի բառերու. զոր օրինակ (քաղելով Մշակ անուամբ Տփղիս հրատարակուող օրագրէ մը. բնիկ հընչմամբ տեղացւոց) կոսիտես, միսիտես, կոնտոլ, կոնգրես, արտիստ, վոդիլ, պիկես, և այլն. և այս կերպով նաեւ «նամակադրմանը» կը լինին մարկաներ, և «ընտրողական յուզմունքը» պիտի կոչուի ընտրողական ազիտացիա, և այլն: Իրաւ է որ այս կերպով աւելի արագ առաջ կ'երթցուի, բայց մեր կը հասնին զնացողներն և օգտակար է այդ ընթացքը: Թող սովորին նաեւ Հայազգիք աշխատութեամբ իրենց նախնեաց շարադրելու եղանակը, և Եւսովորով թող պատրաստուին նաեւ գործելու. Եթեմմ բառով ծաղմբաց առջեւ կը հանէ յանկարծադէպ և անշտհ պարագաներ, որք պատճառ կը լինին նոցա՝ իրենք գիտենք ծառայականութեան հանդիս ենթարկելու, փոխանակ քաղաքներու իրենք գիտենք ազատ և անխնայ աշխատութեամբ» (Պ. Զիւրգանի. Մասնաշարժութիւնը. Միւլան, 1837. Զա. Ժ. 240):

ներուն)։ Արեւմտեայց նման հայերէնն ալ տարբերքի մ'անուան սեռական հոլովը կը գործածէ, որով *ossido di potassa* կը լինի քրոնոսկ կայսոյ (ուղղ. կալի = *kali*, *potassa*) ; *protossido*, *biossido*, *triossido*, և այլն, և այլն, կը զարձուին համապատասխան յատկանշանց մասնակներով նախ, մի, երկ, եռ, և այլն. իսկ այլիս և կան կը ներկայացընեն — *oso* և — *ico*, զոր օրինակ *ferroso* — երկաթային, *ferrico* — երկաթական։

«Տարբարանական կոչմանց կազմութեան կերպը ցուցնելու համար բառական կը համարիմ մինչև հիմա մէջ բերածներս, մեծ ցածր հայազգի տարրագիտաց համար կարևոր է. բայց այսպիսի միայն ըսեմ որ ուսման գործարանաւոր մասին մէջ գիտաբուծիւնը կ'անեն, — *ina* կը վերածուի — իտ վերջաւորութեան, որով կը ձեւանան *chimina* — քիմիկա, *morfeina* — մորֆիա, *narcotina* — րմբիտ, և այլն. քիմիկա այնպէս շինուած է ինչպէս մեր մէջ, մորֆիա զողջուած է յունարէն բառորէն, րմբիտ թարգմանութիւն է եւրոպական կոչման, որովհետեւ րմբիտ (ուսկից կը ծագի րմբիտ) կը նշանակէ *letargo*.

«Իսկ — *ale* (*acetale*, և այլն) վերջացած բառերը կը փոխուին զուտ հայերէն — ան ածանցին, զոր օրինակ *clorale* — քլորան, և այլն. ինչպէս մեր՝ այսպէս և Հայոց մէջ խժաձայն կը հնչեն վերջաւորութիւնքն *benzone* — կնզրուկոն (կնզրուկ — *benzoine*), և նորա եղբայրակիցները։ Օտարաձայն կ'ենրեւին անխեղ և անխոյ, ֆենոլ, և այլն։ Հայ ականջը կը հանդարտի՝ երբ սեփական լեզուով կը լսէ հնչուած ջրածին — *idrogeno* և քրոնոսին — *ossigeno* բառերը։

«Իսկ Բնչ կերպարանք առած են արգեօք հայերենի մէջ *monophenylazotetramethyldiamidobenzidine*, և սորա ընկերակիցներն։ — Այս հսկաները վախ կ'ազդեն նաեւ քաղաքիտ անձանց, և այնքան աւելի՝ որչափ որ իրենց մէջ կը բովանդակեն բազմազոր ծննդական ոգիներ, մինչև հարկ պիտի լինի քիչ աստիճան տպագրական էջերը լայնցընել և երկընցընել, որպէս զի այս կարգի բաներէն մէկ բանին հանգիստ կերպով կարե-

նան ընկողմանիւ։ Հ. Քաղանին բնաւ ուշադրութիւն չի դարձըներ այս տեսակ անուանց, որոնք վայրենի լինելով՝ ոչ իշխող ունին իրենց վրայ և ոչ օրէնք, և կրնան հետեւաբար ինքնակոչ գնալ Հայաստան, և կամ գոցէ թուականով մը (թուական գրութեամբ տարբարանական անուանց) դուրսին, նման պահողիկ մէջ իջեւանող օտարականաց։

Հմուտ լեզուագէտն իւր այս խօսքերը և բովանդակ ճառախօսութիւնը կ'աւարտէ գովեստիւր Հ. Մ. Քաղանույ տարրաբանական անգլանկոլորաբան շատ յաջող կազմութեան համար, յիշեցընելով նաեւ որ շատ պատշաճ կերպով՝ քան զինքն հնադրյաններէն գործածուած քիմիական արտաւետ, քիմիա, գործոքիան, քիմիականութիւն, բնաշնորհ, քիան, տարրաշնորհութիւն, անճիշդ բառերը մէկդի թողլով, տարբեաց գիտութիւնը լաւագոյն մկրտեմ է տարրաբանութիւն անուամբ, թէպէտ և ինքն տարրախնդութիւն բառը ճշգրտոյն թարգման կը համարի մտաց գաղափարին։

ԲԱՆԱՍԵՐ

ՈԹՈՆ ԲԻԶՄԱՐԲ

Ծն. 1815, Ապրիլ 1. — մ. 1898, Յուլիս 30

ԳԵՐՄԱՆԱՅԻ ՀԱՌԱՏԱՐԻՄ ԵԱՌԱՅ

ԿԱՅՍԵՐ

ԳՈՒԼԻԷԼՍ ԱՌԱՋՆՈՅ

1815 — 1898

Հսկայ

ԳԱՂԱԳԱԳԵՏ

օժտուած բարեբաւտիկ կեանքով.